

ԱՄԵՐԻԿԱՆԻ ԲԱՌԻՄԱՍՏԻ ԵՎ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻՈՆՆԵ
ՓՈԽՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ

ԱԻՆԱ ՏՈՆՈՅԱՆ

Լեքսիկայի և քերականության փոխհարաբերության հարցին նվիրված են շատ հետաքրքիր ուսումնասիրություններ ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան լեզվաբանության մեջ: Ի հակադրություն մի շարք ուսումնասիրությունների, որոնք քերականական նկարագրության ժամանակ բացառում են իմաստաբանական գործոնը (ելենիով այն ենթադրությունից, որ քերականական նկարագրությունը անկախ է իմաստաբանականից)¹, սովետական լեզվաբանների մեծ մասը «Լեքսիկականը» և «քերականականը» դիտում է իրենց դիալեկտիկական կապի մեջ²:

Լ. Վ. Շչերբան առանձնապես կարևոր էր համարում լեքսիկո-իմաստաբանական և քերականական մակարդակների փոխհարաբերությունը և այդ փոխհարաբերության ձևերի և հատկանիշների վերլուծությունը: Ա. Ի. Սմիրնիցկին նկատում է. «բառը լինելով լեզվի հիմնական միավորը, իրենից ներկայացնում է լեքսիկական և քերականական մոմենտների միացություն, ունի ինչպես լեքսիկական, այնպես էլ քերականական կողմեր»³: Սույն հոգվածում փորձ է արվում ցույց տալ լեզվի համակարգում բառիմաստի և քերականության փոխհարաբերության կոնկրետ ձևերից մեկը, այն է՝ ածականի շարահյուսական ֆունկցիայի և լեքսիկական իմաստի միջև փոխադարձ կապը գերմաներեն գրական լեզվում: Ածականի քերականական ստրուկտուրայի մեջ այս փոխհարաբերության ուսումնասիրության ժամանակ հիմնական ուղադրությունը կենտրոնացվում է հետևյալ հարցերի վրա.

ա) Ածականի տարբեր շարահյուսական մոդելներում (ներառյալ ատրիբուտիվ և պրեդիկատիվ ֆունկցիաներում) տարբեր բառիմաստների դրսևորումը:

բ) Ածականի նոր շարահյուսական մոդելների առաջացման հնարավորությունները՝ կախված բառիմաստի փոփոխությունից:

գ) Հարաբերական ածականի մեջ նոր որակական նշանակության զարգացումը և դրա շարահյուսական իրականացումը:

¹ Н. Хомский, Синтаксические структуры («Новое в лингвистике», вып. II, М., 1962); Л. Блумфильд, Язык, М., 1968; S. Harris, Methods in Structural Linguistics, Chicago, 1965.

² Л. В. Щерба, О тройном аспекте языковых явлений и об эксперименте в языкознании («Известия» АН СССР, М., 1931); В. В. Виноградов, О взаимодействии лексико-семантических уровней с грамматическими в структуре языка («Мысли о современном русском языке», М., 1969); А. И. Смирницкий, Лексическое и грамматическое в слове («Вопросы грамматического строя», М., 1955); В. Н. Ярцев, Взаимоотношение грамматики и лексики в системе языка («Исследование по общей теории грамматики», М., 1968); И. С. Ильинская, Управление как проблема лексики и грамматики («Ученые записки Московского государственного педагогического института», вып. I, т. 5, М., 1941).

³ А. И. Смирницкий, *Лекс.*, էջ 12.

Յուրաքանչյուր խոսքի մասի համար գոյություն ունի շարահյուսական կիրառման որոշակի շրջանակ՝ կախված տվյալ բառերի կատեգորիալ (կարգային) իմաստից: Ածականի կատեգորիալ իմաստը «հատկանշի հասկացություն»⁴ արտահայտությունը պայմանավորում է այդ խոսքի մասի տարբեր շարահյուսական գործառույթի իրականացումը նախադասության մեջ: Արտահայտելով հատկանիշ՝ ածականը իր լրիվ ձևով հանդես է գալիս գոյականական խմբի մեջ որպես կախյալ բառ-որոշիչ: Իր կարճ ձևով ածականը հանդես է գալիս ածականական խմբում ստորոգելիական դերով և որպես պարագա⁵: Օրինակ՝ որպես որոշիչ. «Indessen fuhr Juliette mit dem neuen Freunde eine Reihe von Anlagen»⁶. (Այդ ժամանակամիջոցում Ջուլիետը նոր ընկերոջ հետ անցավ կանաչ սիզամարգերի մի շարք):

Որպես պրեդիկատիվ «Die Verstellung ist der offenen Seele fremd»⁷. (Գեղծությունը խորթ է անկեղծ հոգուն):

Պարագայի դերում. «Mit Heines Gesundheit bessert es sich erstaunlich»⁸. (Հայնեի առողջությունը զարմանալի ձևով լավանում է):

Որոշիչ գործառույթում ածականի բառիմաստաբանական կառուցվածքին բնորոշ է ցույց տալ առարկային կամ երևույթին հատուկ որևէ հատկանիշ՝ «ժամանակից դուրս, բայց տվյալ կոնտեքստում վերագրված որոշակի ժամանակի»⁹: Ածականի պրեդիկատիվ ֆունկցիան նրա կատեգորիալ իմաստին հաղորդում է նոր երանգ:

Ածականով արտահայտված հատկանիշը դրվում է որոշակի ժամանակային սահմանների մեջ: Դրա հետևանքով ստացվում են տարբեր շարահյուսական կառույցներ, որտեղ նրանցից յուրաքանչյուրի մեջ իրականացվում են նույն ածականի տարբեր բառական իմաստներ: Ածականի գիրքը և շարահյուսական ֆունկցիան փոխում են ոչ միայն նրա իմաստը, այլ նաև նրա վալենտականությունը:

Որոշիչ ֆունկցիայում ածականը գոյականի կողքին բնութագրում կամ ձևտում է վերջինիս իմաստը: Ածականի ընտրությունը գոյականի կողմից դալի շահով կախված է ոչ միայն գոյականի, այլև ածականի իմաստից և բառերի զուգակցման (կապակցման) որոշակի կանոններից ու օրինաչափություններից, որոնք գոյություն ունեն տվյալ լեզվում: Օրինակ՝ «Wer fremde Bürger misshandelt, verletzt die Pflicht»¹⁰. (Ով վատ է

⁴ В. В. Виноградов, Русский язык, М., 1972, стр. 251.

⁵ Գերմաներենում ածականի «լրիվ» և «կարճ» ձևերի հակադրությունը անց է կացվում մեծ հետևողականությամբ: Սակայն քանի որ ածականի «կարճ» ձևերը լրկված են ձևությամբ ցուցանիշներից, ածականները ստորոգելի մեջ ձևականորեն համընկնում են համապատասխան մակբայների հետ: Այս փաստը որոշ քերականների կողմից դիտվում է այն տեսակետից, որ գերմաներեն լեզվում կարճ ածականների և մակբայների միջև տարբերությունը լրիվ շնչված է: (Տե՛ս Н. Paul, Prinzipien der Sprachgeschichte, Halle, 1920. S. 60.

⁶ J. W. Goethe, Poetische Werke, Dramatische Dichtungen, Bd. 1—16, Aufbau-Verlag Berlin und Weimar, 1965.

⁷ F. Schiller, Poetische Werke, dramatische Dichtungen, Volksverlag Weimar, 1956, Bd. 1—5.

⁸ H. Heine, Briefe, Leipzig, 1969.

⁹ В. В. Виноградов, Русский язык, М., 1947, стр. 147.

¹⁰ J. W. Goethe, նշվ. աշխ.:

վերաբերվում օտարերկրացի քաղաքացիներին, խախտում է պարտականությունը) նախադասության մեջ fremd ածականի զուգակցումը Bürger գոյականի հետ այսպես կոչված «իմաստների պայմանավորվածության»¹¹ փաստ է (ածականի և գոյականի սեմանտիկական և շարահյուսական փոխադարձ կապը իմաստների պայմանավորվածության արդյունք է), որը կարող է ունենալ միայն երկկողմանի ուղղվածություն. դա իմաստաբանական և շարահյուսական համաձայնեցում է ինչպես բառակապակցության գլխավոր անդամի, այնպես էլ այդ կապակցության մեջ մտնող ստորադաս անդամների միջև: Fremde Bürger կապակցության մեջ fremd ածականին հատուկ է լեքսիկական սահմանափակում՝ կապված շարակարգի հետ, որտեղ իրականացվում է տվյալ ածականի որոշակի իմաստաբանական տարբերակ. այն է՝ այդ ածականի «օտար», «օտարերկրյա» նշանակությունը: Կարևոր է նշել, որ ատրիբուտիվ և պրեդիկատիվ ֆունկցիաներում fremd ածականը իր պոտենցիալ հնարավորությունների տեսակետից հանդես չի բերում միասեռություն: Շարահյուսական կապի տեսակետից fremd ածականի վալենտականությունը որոշչի դերում համարվում է պասսիվ, քանի որ նրա համար սահմանափակ են հետագա շարահյուսական ծավալման հնարավորությունները: Ավելի ակտիվ վալենտականություն է ցուցաբերում այդ բառակապակցության մեջ շարահյուսականորեն ստորադասող գոյականը: Կ. Ե. Ջոմմերֆելդտը այդպիսի բառակապակցություններում գոյականի վալենտականությունը համարում է ֆակուլտատիվ («Vom Kern aus gesehen ist die Verbindung fakultativ»), իսկ ածականի կոդմից այդ կապակցությունը նա դիտում է որպես անհրաժեշտ («ist die Verbindung obligatorisch, denn das Attribut kann ohne Kern nicht existieren»)¹², որովհետև ածականը առանց ստորադասող գոյականի չի կարող գոյություն ունենալ:

Ջրկվելով արտաժամանակային որակից, fremd ածականով արտահայտվող հատկանիշը պրեդիկատիվ օգտագործման ժամանակ ստանում է ժամանակային բնութագիր: Որակական հատկանիշը պրեդիկատիվ գործառույթում հյուսվում է ստորոգյալով արտահայտված ժամանակի հասկացության հետ: Այս շարահյուսական դերում sein հանգույցի հետ fremd ածականը արտահայտում է ժամանակի մեջ «ծագող և ընթացող»¹³ հատկանիշ, որը վերագրվում է առարկային: Ստանալով «ստորոգելիության»¹⁴ բնորոշ գծեր, պրեդիկատիվ ածականը դառնում է տարբեր շարահյուսական մոդելների կենտրոն և ստանում նոր բառաիմաստաբանական տարբերակ, որը միաժամանակ պայմանավորում է իրեն ստորադաս տարբեր բնույթի լրացումներ նախադասության մեջ:

¹¹ Ю. Д. Апресян. Некоторые итоги дистрибутивного трансформационного анализа русского глагола («Материалы VII Международного методического семинара преподавателей русского языка стран социализма», М., 1967, стр. 47).

¹² К. Е. Sommerfeldt, Zur Valenz der Adjektive. («Deutsch als Fremdsprache», 1971, 2 Heft).

¹³ В. В. Виноградов, Русский язык, стр. 263.

¹⁴ Т. В. Строева, Изменение лексического значения в предикативных именах прилагательных немецкого языка («Вестник Ленинградского государственного университета», 1959, № 4, серия филология, стр. 85).

Freind ածականը պրեդիկատիվ ֆունկցիայում ցույց է տալիս ուրիշ իմաստային շարահյուսական հարաբերություններ, քան նույն այդ ածականը ատրիբուտիվ ֆունկցիայում «օտար», «օտարերկրյա» նշանակությամբ: Ուրպես պրեդիկատիվ՝ freind ածականը տրական հոլովի խնդրի հետ իրականացնում է իր մեջ ներունակ ռելատիվ «որևէ մեկին, որևէ բանի անձանոթ» նշանակությունը: Օրինակ՝ Jetzt, da ich meine Arbeit von einer fremden Hand reinlich geschrieben vor mir habe und sie mir fremder ist, macht sie mir wirklich Freude¹⁵. (Այժմ երբ իմ առջև դրված է իմ աշխատանքը, մաքուր գրված անձանոթ (օտար) ձեռքով, և այն ինձ ավելի օտար է, ինձ իսկապես ուրախություն է պատճառում): Բնութագրելով ածականը ըստ շարահյուսական հնարավորությունների Օ. Բեհագհելը տարբերում է «ռելյատիվ» և «աբսոլյուտիվ»¹⁶ ածականներ: Օ. Բեհագհելը ռելյատիվ է անվանում դատարկ հասկացություններ և հարաբերություններ ցույց տվող ածականները, որոնք ենթադրում են նախադասության մեջ տվյալ բառերի հետագա ընդարձակում ուրիշ հասկացությունների օգնությամբ: Դրանք անվանում են որակ, որը չի կարելի պատկերացնել ինքն իրեն առանց ուրիշ բառերի հետ ունեցած հարաբերության: Տվյալ պրեդիկատիվ ածականի նոր ռելյատիվ նշանակությունը իրականացվում է այն դեպքում միայն, երբ վերջինիս Լլակետային նշանակությունը պարունակում է նոր իմաստի զարգացման հնարավորությունը:

Nah ռելյատիվ ածականը «մոտիկ» տարածության իմաստով հանդես է գալիս գոյականի հետ որոշիչ դերում: Օրինակ՝ «Alles dies geschah dem grossen, nahen Gebirg zuliebe» (Goethe)¹⁷. (Այդ ամենը տեղի ունեցավ հանուն մեծ, մոտիկ լեռան):

Միևնույն ածականի ածանցյալ փմաստը կարող է առարկայացվել ըստ շարակարգի, դուրս գալ առաջին պլան, մինչդեռ ելակետային նշանակությունը կարող է մթազնել: Պրեդիկատիվ ֆունկցիայում տրական հոլովի խնդրի հետ իրականացվում է nah ածականի ուրիշ բառիմաստաբանական տարբերակը, թուլանում է «մոտիկ» տարածականության իմաստը, վերածվում ժամանակաչինի: Օրինակ՝ „Der Tod ist nah, und die Hölle mir“ (Goethe)¹⁸. (Մահը և դժոխքը ինձ մոտ են): Հոգեկան մտերմության իմաստ կա հետևյալ օրինակում. „Und ich bin Ihnen nahe mit allem, was in mir lebt und denkt“¹⁹. (Ես մոտ եմ Ձեզ (հոգեպես) ամեն ինչով, ինչ իմ մեջ ապրում և շնչում է): Հիմնականում առարկայի տարածական հատկանիշ ցույց տվող Nah ածականը օգտագործվում է փոխաբերական իմաստով, հոգեկան վիճակ ցույց տալու համար: Այս ածականի տարբեր բառիմաստները վերը նշված օրինակներում խոստում են նրա տարբեր գործառույթների, տարբեր շարահյուսական զուգորդելիության մասին:

Օգտագործվելով որպես պրեդիկատիվ՝ heilig ածականը տրական հոլովի խնդրի հետ ստանում է նոր երանգ՝ ցույց է տալիս հոգեկան վիճակ, արտա-

¹⁵ J. W. Goethe, նշվ. աշխ.

¹⁶ O. Behagel, Deutsche Syntax, Bd. I, Die Wortklassen und Wortformen, Heidelberg, 1923, S. 140. Նա «աբսոլյուտիվ» է անվանում այն ածականները, որոնք իրենց իմաստով ուրիշ հասկացությունների հետ չեն զուգորդվում:

¹⁷ J. W. Goethe, նշվ. աշխ.:

¹⁸ նույն տեղում:

¹⁹ նույն տեղում:

հայտում սուբյեկտի վերաբերմունք համապատասխան օբյեկտի նկատմամբ, ձեռք է բերում արտահայտչական գունավորում «սուրբ», «սրբազան», «նվիրական» իմաստներում: Օրինակ՝ *„Ich wagte es nicht ihr zu widersprechen, so heilig war mir ihr kleinster Wille“*²⁰. (Ես չհամարձակվեցի հակառակել նրան, այնքան նվիրական էր ինձ համար նրա նույնիսկ ամենափոքր ցանկությունը): Նշված ածականը, որը նախկինում օգտագործվել է միայն եկեղեցական բառապաշարում (*der heilige Gott Vater, die heilige Maria*) աղատվել է իր նեղ նշանակությունից և պրեդիկատիվ ֆունկցիայում սկսել է լայն կիրառվել XVIII—XIX դդ. բանաստեղծական լեզվում: Քննվող ածականի օրինակը ցույց է տալիս, որ ածականի իմաստային բաղադրիչ տարրերը «ներառյալ նրա ոճական և հուզական բնութագիրը, բավականաչափ արտահայտություն են գտնում նրա կառուցվածքային մոդելներում և կապակցություններում»²¹:

Գոյականի խմբի մեջ որոշչի դերում *lang* ածականը իրականացնում է տարածության («երկար») լեքսիկական իմաստը: Օրինակ՝ *«eine lange Reihe der schönen Damen»*. (Գեղեցիկ տիկնանց մի երկար շարք): Պրեդիկատիվ օգտագործման ժամանակ նույն ածականը ի հայտ է բերում այլ արժեքային հնարավորություններ, առկայանում է մի այլ նշանակություն, օգտագործվելով տրական հոլովով տրված բառերի հետ: Օրինակ՝ *«Die Zeit wird mir lang, bis ich zu dir komme»*²². (Ժամանակը անտանելի երկար է թվում, մինչև դամ քեզ մոտ): Այստեղ իրացվում է ամհամբերության շափ «երկար» իմաստը: Մի ուրիշ նախադասության մեջ որպես պրեդիկատիվ *lang* ածականը խոսքին տալիս է արտահայտչական ոճական գունավորում, «երկար», «նհար» իմաստով, *„Er ist lang wie eine Bohnenstange“* (TDW) (նա երկար (նհար) է ինչպես լոբու թուփը):

Պրեդիկատիվ ածականի շարահյուսական ֆունկցիայի դերը այդ մոդելի սահմաններում ուրիշ լեքսիկական իմաստի ճշտման մեջ է: Իմաստային անցումը հանդես է գալիս տարբեր շարահյուսական կոնտեքստներում: Ա. Ի. Սմիրնիցկին նշում է, որ բառի բառաիմաստաբանական տարբերակների միջև եղած տարբերությունը բազմաթիվ դեպքերում արտահայտություն է գտնում կամ շարահյուսական կառուցվածքի, կամ էլ ուրիշ բառերի հետ տարբեր զուգորդելիությունների (կապակցությունների) մեջ²³: *Müde* ածականը գոյականի կողքին որպես որոշիչ գործածվելիս իրականացնում է «հոգնած» հիմնական իմաստը: Օրինակ՝ *müde Augen*. որպես պրեդիկատիվ տրական և հայցական հոլովների աննախդիր լրացումներով *müde* ածականը հանդես է բերում մի նոր բառաիմաստաբանական տարբերակ, որը համարժեք է *„überdrüssig“* (ձանձրալի) ածականին, *„Seid ihr mich schon müde? Euch nicht, sowohl als Euren Umgang“*²⁴. (Ես ձեզ հոգնեցրի՞ (ձանձրացրի)՝

²⁰ „Trübners deutsches Wörterbuch“, Berlin, 1939—1941 (այսուհետև՝ TDW).

²¹ Ю. Д. Апресян, Дистрибутивный анализ значения и структурно-семантические поля («Лексикографический сборник», М., 1962, стр. 57).

²² J. W. Goethe, նշվ. աշխ.

²³ А. И. Смирницкий, К вопросу о слове («Труды Института языкознания АН СССР», М., 1954, стр. 37).

²⁴ J. W. Goethe, նշվ. աշխ.

Ոչ դուք և ոչ էլ Ձեր ընկերակցությունը (հասարակությունը): Կարելի է վկայակոչել ռելյատիվ ածականների ամբողջ մի խումբ, որոնք պրեդիկատիվ ֆունկցիայի ազդեցության տակ կախյալ բառերի հետ գործածվելիս փոխում են իրենց բառիմաստը: Այդ ածականների շարահյուսական կառույցները հաճախ ի հայտ են բերում բազմազան պատկերներ:

Ածականի շարահյուսական ֆունկցիայի փոփոխությունը հաճախ առաջացնում է մի նոր բառային նշանակություն, որն իր հերթին պայմանավորում է համապատասխան ածականի զուգորդելիության փոփոխություն: Ածականի բառային նշանակությունը առկայանում է որոշակի կառուցվածքային մոդելներում, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին իրականացնում է ածականի տարբեր իմաստները, հանդես բերելով ինչպես շարահյուսական, այնպես էլ իմաստաբանական բազմիմաստություն: Վերջինս բնորոշ է հատկապես XVIII—XIX դդ. գեղարվեստական գրականությանը: Գյոթեի, Շիլլերի, Հայնեի մոտ շատ հաճախ պատահում են ածականների անսովոր կապակցություններ, որոնք բնորոշ չեն ժամանակակից գերմաներենին: Bange բազմիմաստ ածականը հանդես է գալիս տարբեր բաշխումային մոդելներում, որոնք ընդգրկում են այդ բառի կատեգորիալ իմաստի բոլոր հնարավոր տարբերակները: Bange ածականի «սարսափելի» բառասեմանտիկական տարբերակը պայմանավորում է աննախդիր տրական և նախդրավոր հայցական հոլովների բաշխումը: Օրինակ՝ „Doch will mir es bange werden über mein eigen Schicksal“²⁵. (մ սեփական ճակատագիրը, սակայն, ինձ շատ է սարսափեցնում): Միայն տրական հոլովով իրացվում է „man bekommt Angst“ «վախենալ» իմաստը: Օրինակ՝ „Es ist mir so bange, als wenn ich feindseligen Mächten überliefert wäre“²⁶. (Ես այնպես եմ վախենում, կարծես տրված լինեմ թշնամական ուժերի իշխանությանը): «Անհանգստանալ որևէ մեկի, ինչ-որ բանի բախտով» տարբերակը հանդես է գալիս, երբ bange ածականը կապակցվում է տրական հոլովի և նախդրավոր հայցականի (um+Acc) հետ. „Mir ist auch gar nicht bange um meine Musik“²⁷. (Ես չեմ անհանգստանում իմ երաժշտության համար): Ռ. Կլափենբախի բառարանում բերվում է օրինակ bange ածականով, որը ժամանակակից գերմաներենում չի օգտագործվում. „Ihr war's bange nach dem Kinde“²⁸ (DWG). (Նա կարոտել էր երեխային): Ածականը, որպես բառակապակցության կենտրոն, տարբեր շարահյուսական ֆունկցիաներում իրացնում է իր բոլոր բառաիմաստաբանական տարբերակները:

Պրեդիկատիվ ֆունկցիայում Dankbar ածականի բառային իմաստի հետ կապվում է «երախտագիտության», «շնորհակալության», «շնորհապարտության» զգացմունքը, այստեղից էլ ծագում է տվյալ ածականի տարբեր բաշխումային հնարավորությունը. „dankbar wem, wofür“. Und ich bin Ihnen doppelt dankbar dafür“²⁹. (Եվ ես Ձեզ կրկնակի շնորհակալ եմ դրա համար):

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում:

²⁸ R. Klappenbach, Wörterbuch der deutschen Gegenwartssprache, Bd 1—II. (1968—70) (այսուհետև՝ DWG).

²⁹ J. W. Goethe, նշվ. աշխ.:

«Որևէ մեկին պարտավոր լինել», «պարտավորված լինել» բառաիմաստաբանական տարբերակը իրականացվում է հետևյալ օրինակում. «Sie wird Dir stets vom Herzen dankbar sein»³⁰. (Նա քեզ միշտ ամբողջ սրտով պարտական կլինի): Dankbar ռեկյատիվ ածականի արժեքականությունը բնութագրվում է զուգորդելիության զանազան հնարավորություններով: Lieb ածականի բառային իմաստը տարբեր ձևով է իրացնում իր իմաստաբանական ուղղվածությունը և իր շարահյուսական հնարավորությունները, կապակցվելով տրական հոլովի հետ. «ireundlich» «սիրալիր», «հաճելի», «սրտաբաց» նշանակությամբ. *Es sollte mir lieb sein*, wenn Ihnen meine Bemühung nicht missfiel»³¹. (Ինձ հաճելի կլինի, եթե իմ ջանքերը իզուր չանցնեն): Բառային իմաստի ռեալիզացիայի ժամանակ ածականի կառուցվածքային լրացման մեջ մեծ դեր են խաղում ածականին ստորադասվող, նրան լրացնող բառերը:

Ածականի բառային իմաստի և շարահյուսական գործառույթի փոխադրեցության խնդրի հետ սերտորեն կապված է նաև տարբեր խոսքի մասերի մեջ որակական հատկանիշի զարգացման հարցը: Փոխակերպվելով ածականի՝ տարբեր խոսքի մասերը լրիվ կամ մասամբ կորցնում են տվյալ խոսքի մասի հատկանիշները և ձեռք են բերում այնպիսի կատեգորիաներ և առանձնահատկություններ, որոնք բնորոշ են ածականին որպես խոսքի մասի: Այդպիսի փոխակերպման հետևանքով ածականի բառաֆունկցիոնալ հնարավորությունը հարստանում է այլ խոսքի մասերի հաշվին: Հետաքրքիր է որակական իմաստ ձեռք բերած այնպիսի ածականների շարահյուսական զուգորդելիությունը, որոնք կազմված են անձ ցույց տվող գոյական անուններից: Նման ածականները հեշտությամբ զարգացնում են նոր որակական երանգներ: Feind ածականը վաղուց արդեն օգտագործվում է պրեդիկատիվ դիրքում: Արդեն Մ. Լյութերի մոտ այն հանդիպում է համեմատության աստիճանով. «*Da Wurden sie jemandem noch feinder*» (TDW): Քերականական նշանակության ազդեցության տակ քայքայվում է գոյականի բառաֆունկցիոնալ դաշտը³²: Feind բառի շարահյուսական կառուցվածքում անհետանում է անձի հասկացությունը, առաջին պլան դրվում որակական հատկանիշը, թշնամական հարաբերությունների սուբյեկտիվ զգացմունքը: Այն դրսևորվում է ածականական բառակապակցությունների մեջ տրական հոլովով կիրառություններում. «*Elne Frau Pred. Z. und andere solche Körper ohne Seele sind mir feind*» (TDW). (Մի տիկին Պրեդ. Z. և նման այսպիսի դեմքեր առանց հոգու ինձ խորթ են):

Գերմաներենում բայական ածականները ստանում են ածականի կարգային հատկանիշներ, մտնում են ածական խոսքի մասի դաշտի մեջ՝ բայի արժեքականությունը օրինաչափորեն հաղորդելով ածականին: Օրինակ՝ *gewöhnen* բայը մի կողմից փոխակերպվելով ածականի՝ լրիվ չի կորցնում կապը բայի բառաֆունկցիոնալ դաշտի հետ, մյուս կողմից իբրև ածական՝

³⁰ E. Agricola, Wörter und Wendungen, Leipzig, 1972 (այսուհետև՝ WuW):

³¹ J. W. Goethe, Պշվ. աշխ.:

³² Լեքսիկո-ֆունկցիոնալ դաշտի տակ հասկացվում է որևէ խոսքի մասի իմաստաբանական և շարահյուսական բոլոր հատկանիշների շրջանակը:

gewohnt-ը նախադասության մեջ կատարում է այդ խոսքի մասին հատուկ բոլոր ֆունկցիաները, որոնք նրան մտցնում են ածականի դաշտի մեջ. „mit dem gewohnten Ton“ (սովորական տոնով) կամ Գյոթեի մոտ՝ „Er, der nur gewohnt ist zu befehlen, kennt nicht die Kunst“³³ (Նա, ով սովոր է հրամայել, արվեստը չի ճանաչում): Օգտագործվելով պրեդիկատ խնդրառող բառի ֆունկցիայով՝ *gewohnt* ածականը կրկնում է *gewöhnen* բայի որոշակի շարահյուսական հնարավորությունները:

Հարաբերական ածականի մեջ որակական հատկանիշների զարգացման դեպքում փոխվում են նաև նրա զուգորդելիության հնարավորությունները: Այսպիսի հարաբերական ածականները նոր իմաստներ արտահայտելու համար ձեռք են բերում նոր ձևեր: Շատ հարաբերական ածականների իմաստաբանական փոխակերպումը առաջ է բերում նաև քերականական հատկանիշի փոփոխություն, երևան են գալիս հարաբերական ածականի կարճ ձևեր և համեմատության աստիճաններ, Այսպես, օրինակ՝ „Aber die Professoren sind hier erst recht viel lederner als in Bonn“³⁴. (Սակայն այստեղ պրոֆեսորները շատ ավելի շոր են (ձանձրալի), քան Բոննում): Այստեղ նյութական հասկացողության հետ կապված *ledern* (կաշվե) հարաբերական ածականը օգտագործվում է փոխաբերական իմաստով, որի հետևանքով ընդլայնվում է այդ ածականի բառային ժառանգը, նրա մոտ երևան են գալիս արտահայտչական սուբյեկտիվ երանգներ, որոնք հանգեցնում են նոր իմաստի առաջացման: Հետևաբար, *ledern* ածականի իմաստի հիմնական տարրերը և նրա բաշխումը որոշակի ձևով կապված են իրար հետ: Վ. Վ. Վինոգրադովը գրում է. «Բառի նոր իմաստի ձևավորման մեջ մեծ դեր է պատկանում որակական գնահատմանը»³⁵: Ածականների իմաստների հեռացումը կարող է լինել տարբեր աստիճանի. հեռացումը կարող է հանգեցնել նոր բառերի առաջացման, մյուս կողմից, այդ տարբերությունները կարող են նշմարվել, ստեղծելով տարբեր երանգներ նույն ածականի իմաստի մեջ: Յուրաքանչյուր իմաստ բնութագրվում է որոշակի բաշխումային բանաձևով, այսինքն՝ տվյալ ածականի բառիմաստի բոլոր երանգները ընդգրկվում են համապատասխան շարահյուսական մոդելներով:

Բառերի լեքսիկոշարահյուսական փոխհարաբերության վերլուծության ժամանակ կարևոր է ոչ միայն յուրաքանչյուր բառի լեքսիկական իմաստը, այլև յուրաքանչյուր իմաստի շարահյուսական ձևավորումը: Կարևոր դեր են խաղում միաժամանակ և՛ մեկը, և՛ մյուսը, ինչպես բառերի իմաստային փոխհարաբերությունը (semantische Kongruenz)³⁶, այնպես էլ այդ բառերի շարահյուսական փոխհարաբերությունը (syntaktische Kongruenz)³⁷ բառակապակցության մեջ:

Վ. Բոնդրինն նկատում է, որ բառի արժեքականության ուսումնասիրության սահմանափակումը միայն շարահյուսական հատկանիշներով հիմնա-

³³ J. W. Goethe, նշվ. աշխ.

³⁴ H. Heine, նշվ. աշխ.

³⁵ В. В. Виноградов, Основные типы лексических значений слов («Вопросы языкознания», 1953, № 5).

³⁶ E. Leisi, Der Wortinhalt, seine Struktur im Deutschen und Englischen, Heidelberg, 1961, S. 63.

³⁷ H. Brinkmann, Die deutsche Sprache, Düsseldorf, 1962, S. 223.

վորված չէ, քանի որ այդպիսի սահմանափակումը հնարավորություն չի տալիս տեսնելու լեզվական երևույթների օրինաչափ ընդհանուր պատկերը³⁸։ Վ. Բոնդզիոնի արժեքականության տեսությունը դուրս է դալիս բայի սահմաններից և կարող է տարածվել նաև ածականի վրա։ Որպես լեզվի կառուցվածքի իմաստաբանական-շարահյուսական տարր՝ ածականների արժեքականությունը որոշվում է լեզվի երկու կողմերով, այսինքն՝ ածականների սեմանտիկայով և շարահյուսական ֆունկցիայով, որոնք հանդես են գալիս որպես իրար ընդգրկող և իրար պայմանավորող։

ВЗАИМООТНОШЕНИЕ ЛЕКСИЧЕСКОГО ЗНАЧЕНИЯ И СИНТАКСИЧЕСКОЙ ФУНКЦИИ ПРИЛАГАТЕЛЬНОГО В НЕМЕЦКОМ ЯЗЫКЕ

АЛИНА ТОНОЯН

Резюме

Дистрибуция прилагательных — это отражение и проявление их общей категориальной семантики, способности выражать в чистом виде понятие качества. В своей атрибутивной функции прилагательное указывает на признак, качество предмета или явления безотносительно ко времени. Напротив, предикативному прилагательному присущ новый оттенок, качество предмета или явления проявляется в определенных временных рамках. Различные синтаксические функции прилагательного способствуют реализации разных сторон его лексико-семантической структуры, т. е. синтаксическая позиция меняет не только функцию прилагательного, но и его значение.

Новое позиционно обусловленное значение в свою очередь оказывает обратное воздействие на синтаксическую сочетаемость прилагательного, т. е. на его валентность. Явление валентности прилагательного (его семантико-синтаксическая сочетаемость) — это одновременное проявление его лексических и грамматических свойств. Сочетательные свойства прилагательного зависят от его синтаксических функций, семантико-синтаксической взаимообусловленности прилагательного и зависящего от него слова.

³⁸ W. Bondzio, Das Wesen der Valenz und ihre Stellung im Rahmen der Satzkonstruktion. (Wissenschaftliche Zeitschrift, Berlin, 1969).